ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

08 հունվարի 2024 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք գ. Պեմզաշեն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մուրադյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի արևելյան տեղամասի բացհանքի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների /4-րդ փուլ/

2024 թվականի հունվարի 8-ին՝ ժամը 12:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ գյուղի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցան հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումը սկսվել է ժամը 12:00-ին:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը, համայնքի ղեկավարի օգնական Տ. Չարչյանը, Արթիկի համայնքապետարանի տարածքային պատասխանատու Մ. Հարեյանը, Հառիճ գյուղի վարչական ղեկավար Ռ. Նազարեթյանը, <<Մուրադյանս>> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ, Հառիճ գյուղի բնակիչներ, Արթիկ համայնքի այլ բնակավայրերի բնակիչներ:

Օրակարգում՝ <<Մուրադյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի արևելյան տեղամասի բացհանքի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներն էին:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման օրակարգը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2024թ. հունվարի 8-ին ժամը 12:00-ին Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվում են «Մուրադյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի արևելյան տեղամասի բացհանքի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում /4-
դ փուլ/:
Իրազեկումը կազմակերպված է եղել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, տեղադրված են եղել համապատասխան բոլոր հարթակներում:

Նախագիծը կցված է եղել հայտարարություններին: Նա զեկուցեց, որ մասնակիցները կարող են իրենց հուզող հարցերը, առաջարկություններն ու դիտողությունները հնչեցնել <<Մուրադյանս>> ՍՊ ընկերության ներկայացուցիչին և ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանին: Նա ասաց, որ հանրությունը բավականաչափ տեղյակ է հանրային քննարկման օրակարգից, ընկերության նպատակներից:

Ելույթ ունեցան՝

1. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանը: Նա ասաց, որ ՇՄԱՓԿ ՊՈԱԿ փորձաքննության է ներկայացվել «Մուրադյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի արևելյան տեղամասի բացհանքի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Այժմ ընթանում է հանրային լսումների 4-րդ փուլը: Փորձաքննվել է նախնական գնահատման հայտը, ընթանում է հիմնական փուլը: ՇՄ ազդեցության օրենքի համաձայն՝ 4-րդ փուլը կազմակերպում է ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ը, հանրային քննարկումների պատասխանատուի հետ համատեղ, ձեռնարկողի մասնակցությամբ: Հաշվետվությունն ուսումնասիրվել է, որոշվել է տվյալ գործունեության ՇՄ ազդեցության շրջանակը: Հայտը ուղարկվել է նախարարության տարբեր ստորաբաժանումներ և մասնագիտական կառույցներ՝ կարծիքների ստացման նպատակով: Ստացված բոլոր կարծիքները հաշվի են առնվել: Եթե ներկաներն ունեն հարցեր, դիտողություններ և առաջարկություններ, ապա կարող են դրանք հնչեցնել կամ 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՇՄԱՓԿ ՊՈԱԿ: Այս փուլից հետո օրենքով սահմանված կարգով կտրվի փորձաքննական եզրակացություն: Հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Հառիճ բնակավայրի վարչական սահմաններում, զբաղեցնում է 7,04 հա տարածք, մարվող պաշարները կազմում են 659 հազ 117 խմ, արդյունահանվող պաշարները 614 հազ 956 խմ, մակաբացման ապարները կազմում են 133 հազ 760 խմ: ՇՄ վրա աշխատանքների ընթացքում կարող են լինել մի շարք ազդեցություններ, որոնք մեղմելու նպատակով ընկերությունը որոշակի միջոցառումներ է ձեռնարկել: Տարվա շոգ և չոր եղանակներին կատարվելու է ջրցան, աղմուկի մակարդակը պետք է լինի նորմայի սահմաններում, կատարվելու են մշտադիտարկումներ, կատարվելու են մթնոլորտային օդի դիտարկումներ՝

շաբաթական մեկ անգամ, հողային ծածկույթի՝ ամսական մեկ անգամ, վայրի բնության, կենսամիջավայրի դիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

2. <<Մուրադյանս>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ. Հակոբյանն ասաց, հայցվող տարածքը նախկինում շահագործված է եղել, վերին շերտը իսպառ բացակայում է, հանքավայրի միջին հզորությունը պաշարի 10 մետր է, ինչը գրեթե 7 հա-ի վրա 9,5 - 10 մետր է կազմում: Նշված տարածքի հետ կապված փաստաթղթերի ներկայացնելուց հետո կատարվել է լրամշակում, ՇՄԱՓԿ ներկայացվել է հնագետի եզրակացություն, ԱԻՆ փորձագիտական եզրակացություն, բոլոր դիտողությունները շտկվել են, բոլոր միջոցառումները համապատասխանում են օրենքով սահմանված նորմերը բավարարելու համար: Ընկերությունը պատրաստ է մասնակցել բոլոր միջոցառումներին՝ ուղղված համայնքի հետ աշխատանքին, սոցիալական ոլորտին: Նախկին լսումների ժամանակ առաջացել էր մի հարց, որը կախված է եղել հողերի համադրման հետ, սակայն իրականում համադրում չկա, կա ՀՀ Կադաստի կոմիտեի կողմից տրված եզրակացություն, տարածքն այլ իրավունքով ծանրաբեռնված չէ: Որևիցե խոչընդոտ այս պահին չկա:
3. Հառիճ գյուղի բնակիչ Ս. Մնոյանն ասաց, որ իրենք չունեն հարցեր, միայն ցանկանում են, որ գյուղը հանքարդյունահանությունից օգուտներ ստանա:
   <<Մուրադյանս>> ՍՊԸ-ի տնօրեն Գ. Մուրադյանն ասաց, որ սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերով ընկերությունը համայնքին կարող է օժանդակել:
4. Նիստը վարող Վ. Մակեյանն ասաց, որ աշխատանքներին ներգրավված են լինելու վարչական տարածքի բնակիչներից: Հառիճի բնակիչները լավ գիտեն հանքարդյունահանման դրական և բացասական կողմերը, քանի որ տարիներ շարունակ այստեղ գործել են հանքավայրեր: Դրա համար այս հանքը չպիտի լինի 2000-ական թվականների հանքավայր, այլ 2024 թվականի հանքավայր, որտեղ ջրցան մեքենաները չպիտի ունենան ձևական բնույթ, պիտի ծառատունկ կազմակերպվի:
   Նիստը վարող Վ. Մակեյանը շնորհակալություն հայտնեց ընկերության ներկայացուցչին, որ իրենք ցանկանում են ներդրումներ ունենալ համայնքում:
5. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանը հավելեց, որ աշխատանքների ավարտից հետո ընկերությունը պատրաստվում է ռեկուլտիվացիա իրականացնել, որի համար ընկերությունը մասհանում է 3

մլն ՀՀ դրամ: Ռեկուլտիվացիան նաև կենսաբանական ռեկուլտիվացիա է ներառում: Եթե ընկերությունը չիրականացրեց ռեկուլտիվացիա, ապա այդ գումարը կբավականացնի՝ պետության կողմից ռեկուլտիվացիան կատարելու համար: Հաշվետվությունում ներկայացված հողերն այս պահի դրությամբ ներկայացված են որպես համայնքային հողեր, ինչի վերաբերյալ համայնքը տվել է իր դրական դիրքորոշումը:

6. Հառիճ բնակավայրի վարչական ղեկավար Ռ. Նազարեթյանն ասաց, որ կարևորը սահմաններն են, եթե այլ տնտեսվարողների և բնակիչների հողերի հետ չկան համադրումներ, ապա ոչ մի խնդիր համայնքը չի տեսնում: Այն գումարները, որոնք ընկերությունը մուծում է համայնքին, իրենք կցանկանային, որ դրանք ուղղվեին Հառիճ բնակավայրի զարգացման համար:

<<Մուրադյանս>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանն ասաց, որ հայցվող հանքի տարածքում նախկինում գործել է երկու ընկերություն, որոնց հանքային իրավունքը դադարեցվել է 2012-2013 թթ, իրենք այդ տարածքի մակաբացման շերտը հանել են, վերին մակաբացման ապարների ուղղությամբ աշխատանքներ չկան աննելու, ներքին մակաբացման ապարները կլինեն, տեղադիրքը նշված է:

Հնչեցին հարցեր՝

1. ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի փորձագետ Գ. Մինասյանը հարցրեց, կան արդյոք հանքատարածքում ճանանպարհներ, նոր ճանապարհներ անցկացնելու անհրաժեշտություն կա արդյոք:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանն ասաց, որ այս պահին կան գործող ճանապարհներ, գործունեության ընթացքում այդ ճանապարհների բարեկարգման աշխատանքներ կկազմակերպվեն: Մեծ տեխնիկա չի նախատեսվում աշխատացնել հանքարդյունահանման ընթացքում:

2. Նիստը վարող Վ. Մակեյանը հարցրեց, արդյոք բնակավայրը մոտ է գտնվում հանքավայրին:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ սանիտարական գոտին պահպանված է, բնակավայրից հանքավայրը գտնվում է բավականաչափ հեռավորության վրա:

3. Նիստը վարող Վ. Մակեյանը հարցրեց՝ քանի տարի է շահագործվել հանքավայրը:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը պատասխանեց՝ 2002-2013 թթ: Հանքավայրը շահագործվել է դեռևս սովետական տարիներից:

Պաշարները առկա են, հաշվարկված են, մնացորդային պաշարները մոտ 690 հազար խմ են:

Նիստը վարող Վ. Մակեյանը հաջողություն մաղթեց ընկերությանը, շնորհակալություն հայտնեց ներկաներին նիստին ներկա գտնվելու համար և համարեց նիստը փակված:

Հանրային քննարկումն ավարտվեց 12:14-ին:

Հանրային քննարկումը վարեց՝

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի
ղեկավարի տեղակալ,
հանրային քննարկումների լիազորված անձ՝ _____ Վ. Մակեյան

Արձանագրեց՝ հանրային լսումների քարտուղար՝
ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի
ղեկավարի օգնական՝ _____ Տ. Չարչյան

<<Մուրադյանս>> ՍՊ ընկերության
տնօրենի կողմից լիազորված անձ՝ _____ Ա. Ապիտոնյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումների մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

<<Մուրադյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի Արևելյան տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ հանրային 4-րդ քննարկման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

08.01.2023 թ. ժամը 12:00-ին

Արթիկ հակայնք, գյուղ Հառիճ

ՀՀ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Բնակավայրը	Ստորագրությունը
1	Հովհաննիսյան Հրանտ	098-07-11-36	—	Հառիճ	
2	Գինոսյան Կարեն	093-98-30-15	—	Հառիճ	
3	Հովսեփյան Վազգեն	093-35-11-92	—	Հառիճ	
4	Խաչատրյանյան Յուրիկ	098-76-86-12	—	Հառիճ	
5	Խաչատրյանյան Հովհաննես	098-50-60-16	—	Հառիճ	
6	Խաչատրյանյան Խաչատուր	098-437-837	—	Հառիճ	
7	Թադևոսի Հովսեփյան	094-019393	ավտոտեսուչ մասնագ.	Հառիճ	
8	Մանուկյան Հայկ	055-575756	—	Հառիճ	
9	Գնեյան Արշակ	093.51.81.00	—	Հառիճ	
10	Մաղյան Հասմիկ	055.44.73.19	2-րդ կարգի տնտեսագետ	Հառիճ	
11	Զաքարյան Դրաստամատ	094 84 02 72	—	Հառիճ	
12	Մաղյան Գառնիկ	055 11 55 94	—	Հառիճ	

13	[illegible]	098-545556	[illegible]	[illegible]	[illegible]
14	[illegible]	055457095	[illegible]	[illegible]	[illegible]
15	[illegible]	077-695-685		[illegible]	[illegible]
16					
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					

28	[illegible]	093625678	[illegible]	[illegible]	[illegible]
29	[illegible]	041222224	[illegible]	[illegible]	[illegible]
30	[illegible]	099910004	—	[illegible]	[illegible]
31	[illegible]	093014046	[illegible]	[illegible]	[illegible]
32	[illegible]	093353638	[illegible]	[illegible]	[illegible]
33	[illegible]	055013300	[illegible]	[illegible]	[illegible]
34	[illegible]	055019089	[illegible]	[illegible]	[illegible]
35	[illegible]	0775 2021	[illegible]	[illegible]	[illegible]
36	[illegible]	022223372	[illegible]	[illegible]	[illegible]
37					
38					
39					
40					
41					
42					